Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1030-24.03.2025-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների աճուրդների կազմակերպման, իրականացման կարգը և պայմանները, ինչպես նաև կանոնակարգում դրանց գործունեությանն առնչվող հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հասկացությունները

1. Սույն օրենքում կիրառվող հասկացությունները.

1) **մշակութային արժեք՝ «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» օրենքում կիրառվող նշանակությամբ**.

2**) մշակութային աճուրդ՝** անգլիական դասական սակարկության ձև, որի արդյունքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների համար առաջարկել է առավելագույն գինը,

3) մշակութային արժեքի և մշակութային նշանակության առարկայի **լոտ՝** աճուրդով վաճառվող մշակութային արժեքներ և առարկաներ որոնք ունեն համապատասխան նկարագրություն, տվյալներ, իսկ աճուրդի դեպքում՝ նաև մեկնարկային գին,

4) **գնահատում՝** մշակութային արժեքի կամ մշակութային նշանակության առարկայի լոտի շուկայական մոտավոր գին, որն ամրագրվում է աճուրդի կատալոգում,

5) մշակութային արժեքի կամ մշակութային նշանակության առարկայի **մեկնարկային գին՝ լոտի** վաճառքի համար նախատեսված գին, որով մեկնարկում է աճուրդը,

6) **քայլ՝** աճուրդում լոտի գնի հետևողական բարձրացում,

7) **աճուրդային գործունեություն**՝ մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների աճուրդներ կազմակերպելու լիազորություններով

օժտված մասնագիտացված ձեռնարկատիրական գործունեություն, որն ուղղված է սույն օրենքով սահմանված ծառայությունների մատուցմանը,

8) **աճուրդավար՝** ֆիզիկական անձ, որն անմիջականորեն վարում է մշակութային աճուրդը,

9) **աճուրդային նվազագույն քայլ՝** նվազագույն չափ, որով բարձրանում է գինը,

10) **աճուրդի կատալոգ՝** տպագիր կամ էլեկտրոնային հրատարակություն, որտեղ ներկայացվում են առաջարկվող օտարման ենթակա լոտերի ցանկը,

11) **նախաաճուրդային ցուցադրություն՝** աճուրդում վաճառքի համար առաջարկված լոտերի ցուցադրում՝ շահագրգիռ կողմերին ծանոթացնելու նպատակով,

12) **աճուրդի մասնակից՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը գրանցվել և ցանկություն է հայտնել իրականացնելու աճուրդի կազմակերպչի միջոցով մշակութային արժեքի կամ մշակութային նշանակության առարկայի օտարման կամ ձեռքբերման գործընթաց,

13**) աճուրդի հավելավճար՝** գնորդի կամ վաճառողի կողմից աճուրդի կազմակերպչին հավելյալ վճար՝ գնված կամ վաճառված լոտի նկատմամբ աճուրդներ կազմակերպելու և անցկացնելու համար,

14) **մշակութային արժեքի կամ մշակութային նշանակության առարկայի վաճառքի գին՝** գին, որը Գնորդն ի վերջո վճարում է առուվաճառքի պայմանագրով իր կողմից գնված լոտի (մշակութային արժեքի կամ մշակութային նշանակության առարկայի) համար, որը ներառում է նաև աճուրդի գինը և աճուրդի հավելավճարը,

15) **մշակութային աճուրդի կազմակերպիչ՝ գույքային իրավունքների տիրապետող, աճուրդային գործունեություն ծավալող լիզենզավորված կազմակերպություն, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և ներկայանում է նրանց կամ իր անունից**.

16) **աճուրդի մասնակցի համարանիշ՝** կազմակերպչի կողմից տրվող բնութագրող տարբերակիչ կոդանիշ,

17) **հայտ՝** աճուրդին մասնակցելու նպատակով աճուրդի մասնակցի կամ կազմակերպչի կողմից ներկայացվող գնման (վաճառքի) առաջարկ, որում նշվում են այդ առաջարկի բավարարման բոլոր էական պայմանները,

18) **գնային հայտի ներկայացում՝** աճուրդի ընթացքում մասնակցի կողմից կատարված գնային առաջարկ, որի չափը չի կարող պակաս լինել աճուրդի կազմակերպչի կողմից նախապես սահմանված նվազագույն հավելման չափից, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով,

19) **մշակութային աճուրդի տուն՝ համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություն, որը տրամադրում է առցանց** և առկա ձևաչափով ենթակառուցվածք, որը նախատեսված է մշակութային արժեքների և **մշակութային նշանակության առարկաների** աճուրդային վաճառքի կամ այլ ընթացակարգերով օտարման կազմակերպման և իրականացման համար.

20) **բիդ՝** այդ պահին ամենաբարձր գինը, որով առկա է գնման պատվեր.

21) **մշակութային նշանակության առարկա՝** «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» օրենքում կիրառվող նշանակությամբ.

22) **արվեստի գործակալ**՝ մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների շուկայում մասնագիտացած մասնակից, որը կատարում է մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների գործարքներ իր անունից և իր հաշվին՝ եկամուտ ստանալով առուվաճառքի գների տարբերությունից.

23) լիազոր մարմին՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով մշակույթի բնագավառում կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման համակարգի մարմին:

ԳԼՈՒԽ 2

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 3. Մշակութային աճուրդների դասակարգումը և տեսակները

1. Մշակութային աճուրդները դասակարգվում են ըստ ժամանակագրության (մ.թ.ա. ժամանակաշրջանից մինչև 21-րդ դար) և տեսակների (հնագիտական, կերպարվեստ, կիրառական արվեստ, գեղարվեստորեն ձևավորված պաշտամունքային նշանակության առարկաներ, ձեռագիր և տպագիր գրական արժեքներ, երաժշտական գործիքներ, կահույք, գոբելեններ, գորգեր):

2. Մշակութային աճուրդի շուկան բաժանվում է նաև առաջնային և երկրորդային մակարդակների.

1) առաջնային մակարդակում մշակութային արժեքների կամ մշակութային նշանակության առարկաների առուվաճառքը տեղի է ունենում անմիջականորեն վաճառողների և գնորդների միջև,

2) երկրորդային մակարդակում մշակութային արժեքները կամ մշակութային նշանակության առարկանները սեփականատերերից վերջնական սպառողներին են

անցնում հատուկ ինստիտուցիոնալ կառույցների մշակութային աճուրդային տների, արվեստի գործակալների միջոցով:

3. Մշակութային աճուրդները լինում են բաց և փակ: Բաց աճուրդներն իրականացվում են հրապարակային, իսկ փակ աճուրդին մասնակցում են միայն այդ նպատակով հրավիրված անձինք:

Հոդված 4. Մշակութային աճուրդին մասնակցելու իրավունք ունեցող անձինք

1. Մշակութային աճուրդներին ուղղակիորեն կարող են մասնակցել միայն մշակութային աճուրդի մասնակիցները և մշակութային աճուրդի կազմակերպիչը:

2. Մշակութային աճուրդի մասնակիցները և լիազորված ներկայացուցիչները պետք է տիրապետեն աճուրդի կազմակերպման կանոններին, ինչը ստուգում է մշակութային աճուրդի կազմակերպիչը՝ հարց ու պատասխանի ձևաչափով՝ նախքան աճուրդի համակարգում աճուրդին մասնակցելու թույլտվության տրամադրումը:

Հոդված 5. Մշակութային աճուրդի կազմակերպիչի և մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները

1. Մշակութային աճուրդի կազմակերպիչն իրավունք ունի՝

1) իրականացնելու մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների փորձաքննություն՝ ներգրավելով փորձագետների.

2) աճուրդից հանելու մշակութային արժեքները և մշակութային նշանակության առարկաները, եթե ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ, կամ փաստաթղթերը ներկայացվել են թերի:

2. Մշակութային աճուրդի կազմակերպիչի պարտականություններն են՝

1) իրականացնել նախաաճուրդային ցուցադրություն,

2) տրամադրել աճուրդի մասնակիցներին լոտերի վերաբերյալ ամբողջական և ստույգ տեղեկատվություն,

3) նախապես մշակութային աճուրդի տան պաշտոնական կայքում և զանգվածային լրատվության միջոցներով (առնվազն տասը աշխատանքային օր առաջ) հրապարակել աճուրդի անցկացման վայրի, ժամի և մասնակցության պայմանների մասին տեղեկատվություն,

4) տեղեկացնել կազմակերպվող աճուրդի կանոնների մասին,

5) ապահովել մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների պահպանման և ցուցադրման պահանջներին համապատասխան նյութատեխնիկական բազա՝ ապահովված մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների անվտանգության միջոցներով, ցուցասրահների հասանելիությամբ և խելամիտ հարմարեցված միջավայրով.

6) ապահովել և երաշխավորել աճուրդում ներկայացված մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների իսկությունն ու ներկայացնել դրանց հավաստիությունը հաստատող փաստաթղթեր.

7) երաշխավորել և իր գույքով պատասխանատու լինել, որ գնորդը փոխանցի անհրաժեշտ գումարը, իսկ վաճառողը տրամադրի մշակութային արժեքը կամ մշակութային նշանակության առարկան:

3. Մշակութային աճուրդի մասնակիցների իրավունքներն են՝

1) ծանոթանալ աճուրդի կազմակերպման և անցկացման կանոնակարգին և ստանալ ամբողջական և ստույգ տեղեկատվություն լոտերի վերաբերյալ,

2) ունենալ անձի գաղտնիության իրավունք:

4. Մշակութային աճուրդի մասնակիցների պարտականություններն են՝

1) գրանցվել և ներկայանալ աճուրդին,

2) տրամադրել և ապահովել մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների իսկությունը,

3) իրականացնել անհրաժեշտ վճարումներ:

Հոդված 6. Մշակութային աճուրդի աշխատանքների կազմակերպման կարգը

1. Մշակութային աճուրդի լսումներն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են համառոտ տեղեկություններ լսումների անցկացման վայրի, ժամանակի, մասնակիցների, լոտերի, մշակութային արժեքի կամ մշակութային նշանակության առարկայի վաճառքի վերաբերյալ:

2. Մշակութային աճուրդի պաշտոնական լեզուն հայերենն է: Էլեկտրոնային աճուրդի դեպքում պետք է լինի եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն կամ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ հայերեն, անգլերեն, արաբերեն) կայք:

3. Մշակութային աճուրդների կազմակերպումն իրականացվում է վճարովի հիմունքներով: Վճարի չափը սահմանում է մշակութային աճուրդի տունը:

Հոդված 7. Մշակութային աճուրդներում գործարքների իրականացումը

1. **Մշակութային ա**ճուրդային տանը մշակութային արժեքների կամ մշակութային նշանակության առարկաների իրացման, ծառայությունների մատուցման, այլ վճարները մշակութային արժեքների ու մշակութային նշանակության առարկաների գնահատման գնանշումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Վճարումներն իրականացվում են անկանխիկ:

2. Չի թույլատրվում իրականացնել ցանկացած գործարք այն մշակութային արժեքների կամ մշակութային նշանակության առարկաների առնչությամբ, որոնց վաճառքը կասեցված է դատական ակտով:

3. Մշակութային աճուրդում գրանցված և ներկայացված մշակութային արժեքները կամ մշակութային նշանակության առարկաները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել պարտավորությունների դիմաց:

ԳԼՈՒԽ 3

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Հոդված 8. Մշակութային աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգը

1. Մշակութային աճուրդները կարող են կազմակերպվել ֆիզիկական մասնակցությամբ և հեռավար (էլեկտրոնային):

2. Մշակութային աճուրդներն իրականացվում են անգլիական դասական եղանակով: Ապրանքը՝ լոտը, աճուրդին առաջադրվում է նվազագույն մեկնարկային գնով, և մասնակիցներն աճուրդի ընթացքում բարձրացնում են գինը: Բիդ (գնային հայտ) ներկայացնելը վճարովի է: Եթե երկու անգամ անընդմեջ դասական ձևով չի

օտարվում նույն արժեքը, ապա այն իրականացվում է նվազեցման եղանակով փոխադարձ համաձայնությամբ:

3. Մշակութային աճուրդը վարում է աճուրդավարը, որը հրապարակում է աճուրդի ձևը, գնային հայտեր ներկայացնելու կարգը, լոտի անվանումը, բնութագրող ցուցանիշները, մեկնարկային գինը (գնահատված արժեքի չափ), աճուրդային նվազագույն քայլի չափը, որը կարող է կլորացվել գնի ճշտությամբ մինչև առավելագույն ամբողջ թիվը:

4. Մշակութային աճուրդի մասնակիցը բարձրացնում է մասնակցի համարանիշի համարին համապատասխանող քարտը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռքբերելու վերաբերյալ: Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկող մեկ մասնակից, որից հետո աճուրդը դադարեցվում է: Այն դեպքում, երբ հայտարարված գնով լոտը ձեռք բերելու համաձայնություն չի լինում, աճուրդավարը կրկնում է մեկնարկային գինը՝ երեք անգամ: Լոտը մեկնարկային գնով երեք անգամ առաջարկելիս գնորդների բացակայության դեպքում տվյալ լոտի աճուրդը համարվում է չկայացած:

5. Մշակութային աճուրդի դեպքում յուրաքանչյուր մասնակից կարող է լոտի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով, բարձրացնելով մասնակցի համարանիշի համարին համապատասխանող համարը (քարտը): Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ մասնակից, որը համարվում է աճուրդում հաղթած մասնակից՝ աճուրդավարի կողմից առաջարկված գինը երրորդ անգամ հայտարարելու և մուրճի երրորդ հարվածից հետո:

6. Մշակութային աճուրդի ժամանակ, եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, ինչից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդում հաղթող է ճանաչվում առաջինը բարձր գին առաջարկող մասնակիցը:

7. Մշակութային աճուրդի հաղթող մասնակիցն ու աճուրդի կազմակերպիչը ստորագրում են աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

8. Եթե մշակութային աճուրդի հաղթող մասնակիցը արձանագրության վերաբերյալ ունի առարկություններ, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

9. Եթե մշակութային աճուրդով չի վաճառվում մշակութային արժեքը կամ մշակութային նշանակության առարկան, ապա մշակութային աճուրդի տունը չի ստանում գնորդի և վաճառողի հավելավճարները:

10. Մշակութային աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով: Մշակութային աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում կազմակերպվում է նոր աճուրդ:

11. Եթե մինչև մշակութային աճուրդի անցկացումը մասնակիցներից մեկը հրաժարվում է հետագա գործարքից, ապա մասնակցության վճարը չի վերադարձվում:

ԳԼՈՒԽ 4
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 9. Պարտադիր պահանջները և պայմանները

1. Էլեկտրոնային ձևով կազմակերպվող աճուրդներին մասնակցելու նպատակով անձը պետք է մուտք գործի համապատասխան մշակութային աճուրդի տան կայք և գրանցվի համապատասխան պատուհանում՝ ընդ որում գրանցման համար պարտադիր է ներքոնշյալ տվյալների և փաստաթղթերի տրամադրումը.

1) անուն, ազգանուն և հայրանուն (իրավաբանական անձանց դեպքում՝ ֆիրմային անվանումը),

2) անձը հաստատող փաստաթղթերի տվյալները, (իրավաբանական անձանց դեպքում գրանցման համարը, ՀՎՀՀ-ն և պետական գրանցման վկայականը),

3) բանկային քարտի կցելը:

Հոդված 10. Մշակութային աճուրդների կազմակերպման լիցենզավորումը

1. Մշակութային աճուրդների կազմակերպման գործունեությունը ենթակա է լիցենզավորման «Լիզենզավորման մասին» օրենքով սահմանված կարգով: Լիցենզավորման կարգը հաստատում է Կառավարությունը:

Հոդված 11. Լիազոր մարմինը

1. Իրականացնում է մշակութային աճուրդների մշտադիտարկում,

2. Իրականացնում է մշակութային աճուրդի տների հաշվառում և լիցենզավորում:

3. Սահմանում է աճուրդի կազմակերպման և անցկացման կանոնակարգը:

Հոդված 12. Տեղեկությունների տրամադրումը

1. Մ**շակութային աճուրդի** տների և մշակութային աճուրդների կազմակերպիչների կողմից մշակութային արժեքների գնման և վաճառքի վերաբերյալ տեղեկություններ կարող են տրամադրվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի պաշտպանության գործողությունների, պետական բյուջեի եկամուտների հավաքագրման հսկողության իրականացման, մաքսային հսկողության իրկանացման նպատակով:

Գ Լ ՈՒ Խ 5

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 13. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից իննը ամիս հետո:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ իննը ամսվա ընթացքում:

Կ-1030-24.03.2025-ԳԿ-011/1 առաջին ընթերցմամբ ընդունված

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԵՆՔ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների աճուրդների կազմակերպման, իրականացման կարգը և պայմանները, ինչպես նաև կանոնակարգում դրանց գործունեությանն առնչվող հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հասկացությունները

1. Սույն օրենքում ~~օգտագործվում են~~կիրառվող հասկացությունները~~ հետևյալ հասկացությունները~~.

1) **մշակութային արժեք՝ «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» օրենքում կիրառվող նշանակությամբ.**

2**) մշակութային աճուրդ՝** անգլիական դասական սակարկության ձև~~,~~ (այսուհետ՝ մշակութային աճուրդ), որի ~~ընթացքում~~ արդյունքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որ~~ն~~ը մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների համար առաջարկել է առավելագույն~~ բարձր~~ գինը.

3) մշակութային արժեքի և մշակութային նշանակության առարկայի **լոտ՝** աճուրդով վաճառվող մշակութային արժեքներ և առարկան~~ն~~ներ, որոնք ունեն համապատասխան նկարագրություն, տվյալներ, իսկ աճուրդի դեպքում՝ նաև մեկնարկային գին,

4) **գնահատում՝** մշակութային արժեքի կամ մշակութային նշանակության առարկայի ~~մոտավոր շուկայական~~ լոտի շուկայական մոտավոր գին, որ~~ն~~ը ամրագրվում է աճուրդի կատալոգում,

5) մշակութային արժեքի կամ մշակութային նշանակության առարկայի **մեկնարկային գին՝ լոտի** վաճառքի համար նախատեսված գին, որով մեկնարկում է աճուրդը,

6) **քայլ՝** աճուրդում լոտի գնի հետևողական բարձրացում,

7) **աճուրդային գործունեություն՝** մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկան~~ն~~երի աճուրդներ կազմակերպելու լիազորություններով օժտված մասնագիտացված ձեռնարկատիրական գործունեություն, որն ուղղված է սույն օրենքով սահմանված ծառայությունների մատուցմանը.

8) **աճուրդավար՝** ֆիզիկական անձ, որն անմիջականորեն վարում է մշակութային աճուրդը,

9) **աճուրդային նվազագույն քայլ՝** ~~միջին~~ նվազագույն ~~մեծությունչափ~~, որով ~~իրականացվում է~~բարձրանում է ~~հետագա~~ մեկնարկային գ~~ի~~նը~~ի բարձրացումը~~,

10) **աճուրդի կատալոգ՝** տպագիր կամ էլեկտրոնային հրատարակություն, որտեղ հրատարակվում ներկայացվում էեն օտարման ենթակա առաջարկվող լոտերի ցանկը՝ որոնք ենթակա են օտարման,

11) **նախաաճուրդային ցուցադրություն՝** աճուրդում վաճառքի համար առաջարկված Լլոտերի ցուցադրում՝ աճուրդի շահագրգիռ կողմերին անմիջականորեն ծանոթացնելու նպատակով,

12) **աճուրդի մասնակից՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով որը գրանցվել է և ցանկություն է հայտնել իրականացնելու աճուրդի կազմակերպչի միջոցով մշակութային արժեքի կամ մշակութային նշանակության առարկայի օտարման կամ ձեռքբերման գործընթաց,

13**) աճուրդի հավելավճար՝** գնորդի կամ վաճառողի կողմից աճուրդի կազմակերպչին հավելյալ վճար՝ գնված կամ վաճառված լԼոտի նկատմամբ աճուրդներ կազմակերպելու և անցկացնելու համար,

14) **Մշակութային արժեքի կամ մշակութային նշանակության առարկայի վաճառքի գին՝** գին, որը գԳնորդը.ը ի վերջո. վճարում է առքուվաճառքի պայմանագրով իր կողմից գնված լԼոտի (մշակութային արժեքի կամ մշակութային նշանակության առարկայի) համար, որը ներառում է նաև աճուրդի գինը և աճուրդի հավելավճարը:

15) **մշակութային աճուրդի կազմակերպիչ՝** **գույքային իրավունքների տիրապետող, աճուրդային գործունեություն ծավալող լիցենզավորված կազմակերպություն, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և ներկայանում է նրանց կամ իր անունից.**

գույքային իրավունքներիը տիրապետող, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկող, ինչպես նաև այն անձը, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիսներկայանում է նրանց կամ իր անունից.

16) **աճուրդի մասնակցի համարանիշ՝** կազմակերպչի կողմից տրվող բնութագրող տարբերակիչ կոդանիշթիվ,

17) **հայտ՝** Աաճուրդին մասնակցելու նպատակով Աաճուրդի մասնակցի կամ կազմակերպչի կողմից ներկայացվող գնման (վաճառքի) առաջարկ, որում նշվում են այդ առաջարկի բավարարման բոլոր էական պայմանները,

18) **գԳնային հայտի ներկայացում՝** աճուրդի ընթացքում մասնակցի կողմից կատարված գնային առաջարկ, որի չափը չի կարող պակաս լինել սակարկության կազմակերպչի կողմից նախապես սահմանված նվազագույն հավելման չափից, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով,

19) **մշակութային աճուրդայինն տուն՝** **համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություն, որը տրամադրում է առցանց** և առկա ձևաչափով ենթակառուցվածք, որը նախատեսված է մշակութային արժեքների և **մշակութային**

նշանակության առարկաների աճուրդային վաճառքի կամ այլ ընթացակարգերով օտարման կազմակերպման և իրականացման համար.

~~օֆլայն և օնլայն հարթակ,~~ ՝~~որը նախատեսված է նյութական մշակութային արժեքների աճուրդային վաճառքի կամ այլ ընթացակարգերով օտարման կազմակերպման և իրականացման համար.~~

20) **բիդ՝** այդ պահին ամենաբարձր գինը, որով առկա է գնման պատվեր.

21) **մշակութային նշանակության առարկա՝** «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» օրենքում կիրառվող նշանակությամբ.

22) **Դդիլեր** ~~(մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների շուկայում),~~՝ մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների շուկայում մասնագիտացված մասնակից է, որը կատարում է մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների գործարքներ իր անունից և իր հաշվին՝ եկամուտ ստանալով առքուվաճառքի գների տարբերությունից.

23) **լիազոր մարմին՝** «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով մշակույթի բնագավառում կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման համակարգի մարմին:

ԳԼՈՒԽ 2
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ~~ԵՎ~~ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸՆ ~~ՈՒ~~ ~~ԵՎ~~ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 3. Մշակութային աճուրդների դասակարգումը և տեսակները.

1. Մշակութային աճուրդները դասակարգվում են՝ ըստ ժամանակագրության (մ.թ.ա. ժամանակաշրջանից մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը կամ 21-րդ դար) և ~~ժանրերի~~ տեսակների (հնագիտական, կերպարվեստ, կիրառական արվեստ, ~~պաշտամունքային նշանակություն ունեցող~~ գեղարվեստորեն ձևավորված պաշտամունքային նշանակության առարկաներ, ձեռագիր և տպագիր գրական արժեքներ, երաժշտական գործիքներ~~.~~, կահույք, գոբելեններ, գորգեր):

2. Մշակութային աճուրդային շուկան բաժանվում է նաև առաջնային և երկրորդային մակարդակների.

1) առաջնային մակարդակում մշակութային ~~արժեքները~~ արժեքների կամ մշակութային նշանակության ~~առարկանը~~ առարկաների ~~վաճառվում կամ ձեռք են բերվում~~առուվաճառքը տեղի է ունենում անմիջականորեն վաճառողների և գնորդների միջև,

2) երկրորդային մակարդակում ~~դեպքում~~ մշակութային արժեքները կամ մշակութային նշանակության առարկաները սեփականատերերից վերջնական սպառողներին են անցնում հատուկ ինստիտուցիոնալ կառույցների՝ մշակութային աճուրդային տների, արվեստի գործակալների, դիլերների միջոցով:

3. Մշակութային աճուրդները լինում են նաև բաց և փակ: Բաց աճուրդներն իրականացվում են ~~անմիջական մասնակիցների մասնակցությամբ~~ հրապարակային, իսկ փակ աճուրդին մասնակցում են միայն այդ նպատակով հրավիրված անձինք:

Հոդված 4. Մշակութային աճուրդին մասնակցելու իրավունք ունեցող անձինք.

1. Մշակութային աճուրդներին ուղղակիորեն կարող են մասնակցել միայն մշակութային աճուրդի մասնակիցները և ~~մշակութային աճուրդի~~ կազմակերպիչը:

2. Մշակույթային աճուրդի մասնակիցները և լիազորված ներկայացուցիչները~~ի՝~~ պետք է տիրապետեն աճուրդի կազմակերպման կանոններին, ~~որը ինչը~~ ստուգվում է մշակութային աճուրդի կազմակերպիչ~~ի կողմից՝~~ հարց-ու-պատասխանի ձևաչափով՝ նախքան աճուրդի համակարգում աճուրդին մասնակցելու թույլտվության տրամադրումը:

Հոդված 5. Մշակութային աճուրդի կազմակերպիչի և մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները.

1. մ ~~Մ~~շակութային աճուրդի կազմակերպիչն~~ը~~ իրավունք ունի՝

1) իրականացնելու մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների փորձաքննություն՝ ներգրավելով փորձագետների.

2) աճուրդից հանելու մշակութային արժեքները և մշակութային նշանակության առարկաները, եթե ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ, կամ փաստաթղթերը ներկայացվել են թերի:

2. Մշակութային աճուրդի կազմակերպիչի պարտականություններն են՝

1) իրականացնել նախաաճուրդային ցուցադրություն,

2) տրամադրել աճուրդի մասնակիցներին լոտերի վերաբերյալ ~~տրամադրել~~ ամբողջական և ստույգ ~~տեղեկատվություն~~տեղեկություն ~~լոտերի վերաբերյալ~~,

3) նախապես (առնվազն ~~10~~ տասը աշխատանքային օր առաջ) հրապարակել աճուրդի ~~կայացման~~ անցկացման վայրի և ժամի մասին տեղեկ~~ատվ~~ություն,

4) տեղեկացնել կազմակերպվող աճուրդի կանոնների մասին,

5) ապահովել մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների պահպանման և ցուցադրման պահանջներին համապատասխան նյութատեխնիկական բազա՝, ապահովված՝ մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների անվտանգության միջոցներով, ցուցասրահների հասանելիությամբ և խելամիտ ~~հարմարեցմամբ~~ հարմարեցված միջավայրով.

6) ապահովել և երաշխավորել աճուրդում ներկայացված մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների իսկությունն~~ը~~ ու ներկայացնել դրանց հավաստիությունը հաստատող փաստաթղթեր.

7) ~~երաշխավորում~~ երաշխավորել և իր գույքով պատասխանատու ~~է~~լինել, որ գնորդը փոխանցի անհրաժեշտ գումարը, իսկ վաճառողը տրամադրի մշակութային արժեքը կամ մշակութային նշանակության առարկան:

3. Մշակութային աճուրդի մասնակիցների իրավունքներն են՝

1) Ծանոթանալ աճուրդի կանոնակարգին և ստանալ ամբողջական և ստույգ տեղեկատվություն տեղեկություն լոտերի վերաբերյալ,

2) ունենալ անձի գաղտնիության իրավունք: .

4. Մշակութային աճուրդի մասնակիցների պարտականություններն են՝

1) գրանցվել և ներկայանալ աճուրդին,

2) տրամադրել և ապահովվել մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների իսկությունը,

3) իրականացնել անհրաժեշտ վճարումներ:

Հոդված 6. Մշակութային աճուրդի աշխատանքների կազմակերպման կարգը

1. Մշակութային աճուրդի լսումներն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են համառոտ տեղեկություններ լսումների անցկացման վայրի, ժամանակի, մասնակիցների, լոտերի, օտարված արժեքների առարկաներիարդյունքների վերաբերյալ:

2. Մշակութային աճուրդի պաշտոնական լեզուն՝ հայերենն է: Էլեկտրոնային աճուրդի դեպքում պետք է լինի եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն կամ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ հայերեն, անգլերեն, արաբերեն) կայք:

3. Մշակութային աճուրդների կազմակերպումը իրականացվում է վճարովի հիմունքներով: Վճարի չափը սահմանում է աճուրդի տունը:

Հոդված 7. Մշակութային աճուրդներում գործարքների իրականացումը

1. Մշակութային աճուրդների տարածքներում մշակութային արժեքների իրացման, ծառայությունների մատուցման և այլ, այլ վճար վճարներըները, վճարումները.,, մշակութային արժեքների ու մշակութային նշանակության առարկաների գնահատման դրամական (փողային) գնանշումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Վճարումներն իրականացվում են անկանխիկ եղանակով:

2. Չի թույլատրվում իրականացնել ցանկացած գործարք այն արժեքների հետառանչությամբ, որոնց վաճառքը կասեցված է դատական ակտով:

3. Մշակութային աճուրդում գրանցված և ներկայացված մշակութային արժեքները կամ մշակութային նշանակության առարկաները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել պարտավորությունների դիմաց:

ԳԼՈՒԽ 3
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Հոդված 8. Մշակութային աճուրդի կազմակերպումը կազմակերպման և անցկացման ընթացակարգը.

1. Մշակութային աճուրդները կարող են կազմակերպվել առկա ֆիզիկական մասնակցության մասնակցությամբ և հեռավար (էէլեկտրոնային) եղանակներով:

2. Մշակութային աճուրդներնը իրականացվում են անգլիական դասական եղանակով: Ապրանքը՝ լոտը, աճուրդին առաջադրվում է նվազագույն մեկնարկային գնով, և մասնակիցներնը աճուրդի ընթացքում բարձրացնում են գինը: Բիդ (գնային հայտ) ներկայացնելը վճարովի է: Եթե երկու անգամ անընդմեջ դասական ձևով չի օտարվում նույն արժեքը, ապա այն իրականացվում է նվազեցման եղանակով՝ փոխադարձ համաձայնությամբ:

3. Մշակութային աճուրդը վարում է աճուրդավարը, ով որը հրապարակում է աճուրդի ձևը, գնային հայտեր ներկայացնելու կարգը, լոտի անվանումը, բնութագրող ցուցանիշները, մեկնարկային գինը (գնահատված արժեքի չափ), աճուրդային նվազագույն քայլի չափը, որը կարող է կլորացվել գնի ճշտությամբ մինչև առավելագույն ամբողջ թիվը:

4. Մշակույթի Մշակութային աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր մասնակցի վկայականի համարին համապատասխանող քարտը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռք բերելու մասին վերաբերյալ: Աճուրդավարը շարունակում է աճուրդնը այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկող մեկ մասնակից, որից հետո աճուրդը դադարեցվում է: Այն դեպքում, երբ հայտարարված գնով լոտը ձեռք բերելու համաձայնություն չի լինում, աճուրդավարը կրկնում է մեկնարկային գինը՝ երեք անգամ: Լոտը մեկնարկային գնով երեք անգամ առաջարկելիս գնորդների բացակայության դեպքում տվյալ լոտի աճուրդը համարվում է չկայացած:

5. Մշակույթի Մշակութային աճուրդի դեպքում յուրաքանչյուր մասնակից կարող է լոտի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով, բարձրացնելով մասնակցի վկայականի համարին համապատասխանող համարը (քարտը): Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ մասնակից, որը համարվում է աճուրդում հաղթած մասնակից՝ աճուրդավարի կողմից առաջարկված գինը երրորդ անգամ հայտարարելու և մուրճի երրորդ հարվածից հետո:

6. Մշակույթի Մշակութային աճուրդի ժամանակ, եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից ինչից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդում հաղթող համարված է մասնակից է ճանաչվում առաջինը բարձր գին առաջարկող մասնակիցը:

7. Մշակութային աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը և աճուրդի կազմակերպիչը ստորագրում են աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

8. Եթե մշակութային աճուրդումի հաղթող ճանաչվածած անձը մասնակիցն արձանագրության վերաբերյալ ունի առարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

9. Եթե մշակութային աճուրդով չի վաճառվում մշակութային արժեքը կամ մշակութային նշանակության առարկան, ապա մշակութային աճուրդային աճուրդի տունը չի ստանում գնորդի և վաճառողի հավելավճարները:

10. Մշակութային աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով: Մշակութային աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում կազմակերպվում է նոր աճուրդ:

11. Եթե մինչև մշակութային աճուրդի անցկացումը մասնակիցներից մեկը հրաժարվում է հետագա գործարքից, ապա մասնակցության վճարը չի վերադարձվում:

ԳԼՈՒԽ 4
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 9. Պարտադիր պահանջները և պայմանները

1. Էլեկտրոնային ձևովՀեռավար կազմակերպվող աճուրդներին մասնակցելու նպատակով անձը պետք է մուտք գործի համապատասխան մշակութային աճուրդային աճուրդի տան կԿայք և գրանցվի համապատասխան պատուհանումի միջոցով, ընդ որում՝ գրանցման համար պարտադիր են է ներքոնշյալ տվյալների և փաստաթղթերի տրամադրումը.

1) անուն, ազգանուն և հայրանուն (Իիրավաբանական անձանց դեպքում՝ ֆիրմային իրավաբանական անձի անվանումը),

2) անձը հաստատող փաստաթղթերի տվյալները, (Իիրավաբանական անձանց դեպքում՝ գրանցման համարը, ՀՎՀՀ-ն և իրավաբանական անձանց դեպքում պետական գրանցման վկայականը),

3) բանկային քարտի կցումը կցելը:

Հոդված 10. Մշակութային աճուրդների կազմակերպման լիցենզավորումը

1. Մշակութային աճուրդների կազմակերպման գործունեությունը ենթակա է լիցենզավորման «Լիզենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պարզ ընթացակարգով: Լիցենզավորման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 11. Լիազոր մարմինը

1. իԻրականացնում է մշակութային աճուրդների մշտադիտարկում,

2. իրականացնում է մշակութային աճուրդային տների հաշվառում,÷

3. սահմանում է աճուրդների կազմակերպման և անցկացման կանոնակարգը:

Հոդված 12. Տեղեկությունների տրամադրումը

1. **Մշակութային** աճուրդային աճուրդի տների և մշակութային աճուրդների կազմակերպիչների կողմից մշակութային արժեքների գնման և վաճառքի վերաբերյալ տեղեկություններ կարող են տրամադրվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության,

հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի պաշտպանության գործողությունների, պետական բյուջեի եկամուտների հավաքագրման ~~հսկողություն~~ հսկողության իրականացման, մաքսային հսկողության իրկանացման նպատակով:

Գ Լ ՈՒ Խ 5.
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 13. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝~~,~~ բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքնի~~ի~~ ուժի մեջ մտնելուց հետո՝ ինը ամսվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ՝ **Վ. Խաչատուրյան**

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Կ-1030-24.03.2025-ԳԿ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
1.	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 2 –ի 1-ին կետում**	**«օգտագործվում են հետևյալ հասկացությունները» փոխարինել «կիրառվող հասկացությունները» բառերով**	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
2.	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 2 –ի 1-ին կետի 1-ին ենթակետում**	«Ընթացքում» բառը փոխարինել «արդյունքում» բառով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
3.	**ՀՀ կառավարություն**	**4-րդ ենթակետում**	«մոտավոր շուկայական» բառերը փոխարինել «շուկայական մոտավոր» բառերով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

4	**ՀՀ կառավարություն**	**9-րդ ենթակետում**	«մինիմալ» բառը փոխարինել «նվազագույն» բառով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
5.	**ՀՀ կառավարություն**	**15-րդ ենթակետում**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 15) մշակութային աճուրդի կազմակերպիչ՝ գույքային իրավունքների տիրապետող, աճուրդային գործունեություն ծավալող լիզենզավորված կազմակերպություն, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և ներկայանում է նրանց կամ իր անունից.	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
6.	**ՀՀ կառավարություն**	**19-րդ ենթակետում**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 19) մշակութային աճուրդի տուն՝ համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություն, որը տրամադրում է առցանց և առկա ձևաչափով ենթակառուցվածք, որը նախատեսված է մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների աճուրդային վաճառքի կամ այլ ընթացակարգերով օտարման կազմակերպման և իրականացման համար.	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

7.	**ՀՀ կառավարություն**	**22-րդ ենթակետում**	«դիլեր» բառը փոխարինել «արվեստի գործակալ» բառերով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
8	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 3-րդ 1ին կետ**	«Ժանրերի» բատը փոխարինել «տեսակների» բառով	**Ընդունվել է :**	**Ընդունվել է:**
9	**ՀՀ կառավարություն**	Հոդված 3-րդ 2-րդ կետ 2-րդ ենթակետ	«երկրորդ դեպքում» բառերը փոխարինել «երկրորդային մակարդակում» բառերով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
10	**ՀՀ կառավարություն**	Հոդված 3-րդ 3-րդ կետ	«անմիջական մասնակիցների մասնակցությամբ» բառերը հանել	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
11	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 4 1-ին կետ**	«մշակութային աճուրդի» բառերը հանել	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
12	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 5 2-րդ կետի 2-րդ ենթակետ**	«աճուրդի մասնակիցներին տրամադրել ամբողջական և ստույգ տեղեկատվություն լոտերի վերաբերյալ,» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. « աճուրդի մասնակիցներին լոտերի վերաբերյալ ամբողջական և ստույգ տեղեկատվություն,»	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
13	**ՀՀ կառավարություն**	Հոդված 5 2-րդ կետի 5-րդ ենթակետ	«հարմարեցմամբ» բառը փոխարինել «հարմարեցված» բառով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

14	**ՀՀ կառավարություն**	Հոդված 5 2-րդ կետի 7-րդ ենթակետ	«երաշխավորում» բառը փոխարինել «երաշխավորել» բառով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
15	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 6 1-ին կետ**	«1. Մշակութային աճուրդի լսումներն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են համառոտ տեղեկություններ լսումների անցկացման վայրի, ժամանակի, մասնակիցների, լոտերի, օտարված արժեքների արդյունքների վերաբերյալ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Մշակութային աճուրդի լսումներն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են համառոտ տեղեկություններ լսումների անցկացման վայրի, ժամանակի, մասնակիցների, լոտերի, մշակութային արժեքի կամ մշակութային նշանակության առարկայի վաճառքի վերաբերյալ:»	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
16	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 7 1-ին կետ**	« 1. **Մշակութային ա**ճուրդների տարածքներում մշակութային արժեքների իրացման, ծառայությունների մատուցման, այլ վճարները, վճարումները, մշակութային արժեքների ու մշակութային նշանակության առարկաների գնահատման դրամական (փողային)	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			գնանշումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Վճարումներն իրականացվում են անկանխիկ եղանակով: » կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. **Մշակութային ա**ճուրդային տանը մշակութային արժեքների կամ մշակութային նշանակության առարկաների իրացման, ծառայությունների մատուցման, այլ վճարները մշակութային արժեքների ու մշակութային նշանակության առարկաների գնահատման գնանշումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Վճարումներն իրականացվում են անկանխիկ:»:		
17	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 8**	Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 8. Մշակութային աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգը**», Իսկ 4, 5, 6 կետերում «Մշակույթի աճուրդի» բառը փոխարինել «Մշակութային աճուրդի» բառերով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

18	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 9 1-ին կետի 1-ին ենթակետ**	«ֆիրմային» բառը փոխարինել «իրավաբանական անձի» բառերով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
19	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 9 1-ին կետի 3-ին ենթակետ**	«Քարտը կցումը» փոխարինել «քարտի կցելը» բառերով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
20	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 12 1-ին կետ**	«աճուրդային» բառը հանել, իսկ «հսկողություն» բառը փոխարինել «հսկողության» բառով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
21	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 13**	«ինը ամիս» բառերը փոխարինել «մեկ տարվա» բառերով, իսկ «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի վերաբերյալ					
22.	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 1.**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 17.1 Մշակութային աճուրդների կազմակերպման լիցենզիա տալու համար պետական տուրքի դրույքաչափը 1. Մշակութային աճուրդների տան լիցենզիա տալու համար գանձվում է	**Ընդունվել է**	**Ընդունվել է:**

			պետական տուրք՝ տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով, 2. Մշակութային աճուրդների կազմակերպչի լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք՝ տարեկան բազային տուրքի 5000-ապատիկի չափով»»:		